



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Վ Ա Յ Ո Ց Ձ Ո Ր Ի Մ Ա Ր Ձ Պ Ե Տ

Ք. Եղեգնաձոր, Շահումյան 5

Հեռ. /374010/ 287401, 2 25 22

‘ _____ ’ 2019թ.

N _____

Ֆաքս /374010/ 28 18 32

**ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Գ.ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Պետրոսյան

Ի պատասխան Ձեր 2019թ նոյեմբերի 30-ի թիվ 7532 հարցման՝ հայտնում եմ, որ մարզպետարանը ղեկավարվելով „Պետական և ծառայողական գաղտնիքի մասին,, ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի բ/ ենթակետի երկրորդ պարբերության, ինչպես նաև ՀՀ կառավարության 1998թ մարտի 13-ի „ՀՀ պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկը հաստատելու մասին,, N 173 որոշման 2-րդ կետի և ՀՀ կառավարության 1998թ հոկտեմբերի 29-ի „ՀՀ կառավարության որոշումը ՀՀ պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկի մշակման կարգը հաստատելու մասին,, N 665 որոշման հավելվածի 4-րդ կետի պահանջներով մերժում է հարցման 1-ից 6-րդ կետերով տեղեկատվության տրամադրումը:

Ինչ վերաբերվում է հարցման 7-րդ և 8-րդ կետերին, ապա վերը նշված կետերով տեղեկատվությունը տեղադրված է մարզպետարանի պաշտոնական/vdzor.mtad.am/ կայքի „Մարզպետարան,, բաժնի „Բյուջե,, ենթաբաժնում:

Հարցման 9-րդ կետի մասին հայտնում եմ, որ 2017-2019թթ ստացված 49 հարցումներից միայն 3-ն են մերժվել՝ պետական և ծառայողական գաղտնիք պարունակելու հիմնավորմամբ:

Հարցման 10-րդ կետի մասին հայտնում եմ, որ 2017թ ստացվել են 13, 2018թ ստացվել են 14, իսկ 2019թ անցած ժամանակաձրջանում ստացվել են 22 հարցումներ, բոլոր հարցումներին պատասխանվել է հնգօրյա ժամկետում:

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցումները գտնվել են մեր ամենօրյա ուշադրության կենտրոնում, դրանց պատասխանվել է առավել հասանելի եղանակով:

 Недействительная подпись

X *Gr. Grigoryan*

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հարգանքով՝ Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կատարող՝ Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Հեռախոս՝ /0281/ 2-25-57